

անոնք կրնային նկատուիլ քրիստոնեայ աշխարհին իբր առաջին կրօնաւորուհիները . Աստուած պարզեա՞ծ էր անոնց մարգարէութեան ոգի: Ս . Պաւղինէ իր ուխտաւորութեան ժամանակ այցելեց անոնց սենեակները՝ որ այն ատեն մեծապէս կը յարգուէին (Mis. Բ . հատոր, էջ 105):

զ) Վկաներ . — Վաղերիանոսի հալածանքի ժամանակ մէկ քանի վկաներ գտնուեցան ի Կեսարիա, որոնց անունները պահած է Եւսեբիոս: Նախ Պրիսկոս, Մաղքոս և Աղեքսանդր որ գաղաններուն առջև նետուեցան, յետոյ Մարինոս զինուորականը (հմտ . Եւս . Եկեղց . Պատմ . դպր . է . գլ . ԺԵ .): Եւսեբիոս որ Ս . Երկրին վրայ թանկագին գրուածքներ ունի, Կեսարիոյ եպիսկոպոսն էր . հոն բազմաթիւ մարտիրոսներ եղան Քրիստոսի սուրբ հաւատքին համար . ի մէջ այլոց Երուսաղէմացի Ս . Պրոկոպիոս, Զաքէոս՝ Գաթարայի սարկաւազը, Ալփէոս Ելեթերոպոլսեցի, Ապպիանոս Լիւկիացի, Պետրոս Աբսալամոս, Թէոտոսիա Տիւրացի կոյսը, Ս . Աթանաս Պարսիկ, Պամփիլիոս Պէրուժցի սրուն կը պարտինք Ս . Գրոց վրայ հմտալից դորձեր, և շատ ուրիշներ որ Կեսարիոյ ճշմարիտ մեծ մարգերն են (Mis. Բ . հատ . էջ 108):

դ) Զոսիմոս մկնակեացն ու սոխձը . — Եւագր իր Եկեղեցական Պատմութեան (Գիրք Զ . 7) մէջ կը պատմէ հրաշալի դրուագ մը, որով այս վերև յիշուած մենակեացին պատմութիւնը աւելի ընդարձակուած է: Կեսարիա գացած ժամանակ իր էշուն հետ որ իր բնոր կը տանէր, պատահեցաւ առիւծի մը որ յարձակելով էշուն վրայ տարաւ մերձակայ անտառը պատառ պա-